Հայրապետաց դասուց գումարից
Մարտիրոսացըն բազմերամից,
Ճգ՛նաւորաց խարազնազգեցից
Եւ կուսանացըն մաքրազարդից,
Ընդ անմարմնոց գոլով պարակից
Եւ ըստ կարգի մերում տօնակից՝
Զի և փառաց նոցա դասակից
Հաղորդ լիցուք և պըսակակից. Բր։
Ի հողանիւթ զարմէս ընդրեցար
Կոյս անարատ և Աստուծոյ մայր,
Փոխանակ տրտմութեան մեզ ուրա-
[խարար
Առիթ փրկութեան և կենաց պատճառ.
Աբրահամեան ուխտին տաղաւար.
Անկէզ մորենի և մաքուր տաճար.
Կենաց կըտակ և անճառ տումար.
Տախտակ քարեղէն և հոգւոյ քընար,
Գեղմն իմանալի ցօղովըն լցար.
Լեառն վիմածին կանխաւ յայտնեցար
Առաւօտ լուսոյ և զուարթարար
Եւ գերարփին ի յերկրի ցուցար,
Ծառըդ կենաց այսօր ծաղկեցար
Զբանն ի մարմնի միացեալ ծնար։
Առ քեզ գոչեմք ձայն աղերսաբար
Լեր բարեխօս առ Տէրն անդադար,

Պահել զմեզ անդորրաբար,
Հաղորդ լինել փառաց անըսպառ,
Ահա յիշ. — Եւ եւս. — Զանձինս։
Էին անեղին հայրածին Բանին [ծին,
Տաճար մարմնային սուրբ Աստուածա-
Բարեխօսեա քո սուրբ Միածնին
Զի փրկեսցէ զմեզ յահագին
Աղաչանօք Յովաննու ձայնին
Ի ծնունդս կանանց մեծ կարապետին
Խընդըրուածովք սուրբ կարապետին,
Նախաչաւիղ մեծ ճանապարհին
Պաղատանօք վեհին հանդիսին [բին,
Որք ի վերնատունն զՍուրբ Հոգին ար-
Մաղթանօք մեր սուրբ Լուսաւորչին
Պարգևատուն մեծ հօտապետին.
Աղերս հայցուածոց ընդ քեզ քաղց-
[րացին
Զայն համագումար ընտրելոյ դասին.
Զի գթասցի Տէրն ողորմագին
Եւ թողցէ զյանցանս մերոյ պարտին.
Դարձուսցէ զպատիժըն պատուհասին
Եւ փրկեսցէ յարկածից չարին,
Եւ նորոգեսցէ յաւուրըն վերջին
Հաղորդս արասցէ տանըն հայրենի։
Եւ այժմ ողոր։

## ՏԱՂ Ս. ԹԷՈԴՈՐՈՍԻ

Խաղաղարար նոր թագաւոր
Քո զինուորացըն հոգևոր,
Խաղաղութեան եկեղեցւոյ
Զթէոդորոս եդիր զինուոր։
Որ զօրացեալ քև հոգեպէս,
Անփակ արագ հրեշտակապէս
Քաջ քո վըկայն Թէոդորոս.
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։
Ըզխռովարարն եկեղեցւոյ՝
Ըզգայապէս եհար ազդոյ
Քաջ քո վըկայն Թէոդորոս.
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։
Նըման խաչի քո չարչարեալ
Եղև փառաց քոց հաղորդեալ,
Մահուամբ ըզման քո վըկայեալ
Զքոյդ յարութիւն կենօքն յայտնեալ։
Պարտեաց մահուամբըն ըզբելիար
Եւ յետ մահու զպաշտօնեայն չար,
Քաջ քո վըկայն Թէոդորոս.
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։
Րամից զօրաց քոց հրանիւթից
Յուցաւ բարեաց գոլ գործակից
Քաջ քո վըկայ Թէոդորոս
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։
Ցածոյց Սըրբոյ Հոգւոյդ հողմով՝
Զմեծ ջըրհեղեղն և զմեղաց ծով,
Քաջ քո վըկայն Թէոդորոս.
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։

digitised by A.R.A.R.@

Զաստուածային փառաց քոյին
Բերեալ վրիժուց նախանձ յոգին,
Քաջ քո վկայն Թէոդորոս.
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս։
Դասուց քոյին զօրականաց
Ընտիր ցուցար յառաջակաց,
Զօրաց քոյոց նահատակաց
Ցաղթող գլուխ պատերազմաց։

Որ ըզպահոց ըզվրէժ խընդրեաց,
Զեկեղեցիս քո ազատեաց.
Ըզգաւ չարին խայտառակեաց
Զցուլիանոսըն սատակեաց։
Որպէս ոսկի հրով փորձեցաւ,
Սուրբ ողջակէզ վերընկալաւ
Քաջ քո վկայն Թէոդորոս
Հայցմամբ նորին լուր մեզ Քրիստոս։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ

## ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

(Տես յէջ 60)

Այս խոստովանութեան մերո(յ) հաստատութիւն հաւատո(յ) և յոյս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր. ընդ որում Հաւր միանգամայն և Հոգւոյն Սրբո(յ) փառք, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ ասացեալ բազմութեան զամէնն։

Ասէ Բոգասորն. Արդ ամենայն ինչ կատարեցաւ 'ի քոյոց Աստուծոյ բան հաստատո(յ). արդ լեալ [1] նշանագրաց երկոտասնեկերաց։

Յայնժամ Զամբրիհ մոգ ասէ [2]. Ըստ կարծեաց յաղթահարեալ ցուցան մետասան վարդապետք Հրէից 'ի Սեղբեստրոսէ ճարտարաբանու... էգ. այլ ես ո՛չ բանիւ ընդդիմահարիմ [3], այլ գործով յանդիման առնեմ զանուն Աստուծոյ, զոր ոչ ոք կարէ առնել։

Αὔτη ἐστὶν ἡ πίστις ἡ ἡμετέρα, ἣν κρατοῦμεν, καὶ κηρήττομέν· εἰ οὖν ἐνδεῖς τι ὑπολαμβάνεις, ὦ Ἰουδαῖε, ἐρώτησον·

Τότε Ζαμβρῆς δωδέκατος φυσήσας εἰς τὸ πρόσωπον αὐτοῦ ἔφη, Εἰ ἀνθρωπί οις λογισμοῖς, καὶ ὑποδειγμάσιν ὁ Σίλβεστρος κεχρῆσθαι εὐπορεῖ, ἤδη ἡμεῖς καταλεῖψαι τοὺς πατρώους νόμους ὀφείλομεν, καὶ ἀκολουθῆσαι ἀνθρώπῳ μάγῳ, ὃν οἱ πατέρες ἡμῶν ἐκ συμφώνου κατέκριναν· ἀλλ' ἄκουσόν μου, κύριε βασιλεῦ, καὶ κέλευσον ἀχθῆναι ταῦρον ἄγριον, ἵνα δείξω σήμερον ἐναντίον αὐτοῦ τὴ δύναμιν τοῦ

1. Ա օրինակն դրէ " Նշանաց ցոյցք " ։ Յունարէնի մէջ նշանագրաց յիշատակութիւն չըկայ, այլ կ'ըսուի, թէ " Յորժամ կամէր կայսերն վերջ տալ վիճաբանութեան, յայնժամ Զամբրիս ", և այլն։

2. Զամբրիս մոգին խօսակցութիւնն և ըլլալ պատմութիւնն՝ որ յունարէնի մէջ 8 էջ ընդարձակ տեղ գրաւեր է, մանր և [illegible]. յունական պարագայիւք, հայն ընդհանրապէս 2 էջի վերածեր է զայն, բառ քանեաց յարմարելով գրանս։

3. Ընդդիմահարիմ կրաւորականը՝ հոս միայն գործածուած է, հակառակ իմաստով։

digitised by A.R.A.R.@